ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև մշակութային համագործակցության մասին համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև մշակութային համագործակցության մասին համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավական ակտերի փորձաքննության
վարչության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և
Կորեայի Հանրապետության Կառավարության միջև
մշակութային համագործակցության մասին» համաձայնագրի
ստորագրման նպատակահարմարության մասին

Կորեայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև մշակութային հարաբերություններ պաշտոնապես դեռևս չեն հաստատվել և չի ձևավորվել իրավական դաշտ, սակայն վերջին տարիներին նկատվում է համագործակցության աշխուժացում. մասնավորապես՝ հայ կինոգործիչները մասնակցել են Պուսանի կինոփառատոնին, Հայաստանում անց է կացվել կորեական ֆիլմերի փառատոն, կազմակերպվել են կորեական «Եչժոն» պարախմբի համերգները՝ նվիրված ՀՀ և ԿՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 15-ամյակին:

Կարևորելով երկու երկրների միջև մշակութային կապերի զարգացումն ու ամրապնդումը՝ նպատակահարմար ենք գտնում սույն համաձայնագրի ստորագրումը, որը հնարավորություն կընձեռի մշակութային փոխանակումների իրականացմանը և կողմերի մշակութային միջոցառումներին, փառատոներին, մշակութային ժառանգության պահպանման խնդիրների շուրջ սեմինարներին և սիմպոզիումներին մասնակցությանը, կինոֆիլմերի փոխանակումներին, ինչպես նաև կարճաժամկետ ծրագրերի ստորագրմանը, որտեղ կընդգրկվեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող կոնկրետ միջոցառումներ:

Համաձայնագրի ստորագրումը կնպաստի ՀՀ քաղաքացիների՝ ստեղծագործական ազատության, հասարակության մշակութային կյանքին մասնակցելու սահմանադրական իրավունքների ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ մշակույթի նախարարությունը նպատակահարմար է գտնում մշակույթի բնագավառում համագործակցության համաձայնագրի ստորագրումը:

Նախարար՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կորեայի Հանրապետության կառավարությունը, այսուհետև՝ «Կողմեր»,

ձգտելով ամրապնդել բարեկամական հարաբերությունները,երկու երկրների միջև

ցանկանալով զարգացնել համագործակցությունը մշակույթի բնագավառում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1.

Կողմերը համաձայնվում են սույն համաձայնագրին և իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան իրականացնել համագործակցություն մշակույթի բնագավառում:

Հոդված 2.

Կողմերը կզարգացնեն սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունը երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տարբեր ոլորտներում, և նրանք հատկապես կխրախուսեն անհատ կատարողների, թատերական, գեղարվեստական և ժողովրդական խմբերի, ցուցահանդեսների փոխանակումները, ինչպես նաև համագործակցությունը կինոյի ոլորտում՝ ֆիլմերի փոխանակման կամ մյուս կողմի կազմակերպած միջազգային կինոփառատոներին մասնակցելու միջոցով:

Հոդված 3.

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը և տեղեկության փոխանակումը երկու երկրների թանգարանների, գրադարանների և արխիվների միջև:

Հոդված 4.

Կողմերը կկազմակերպեն երկկողմ սեմինարներ և սիմպոզիումներ համապատասխան հասարակական և մասնագիտական հաստատությունների փորձագետների և մշակութային ժառանգության պահպանման խնդիրներով զբաղվող մասնագետների մասնակցությամբ:

Հոդված 5.

Կողմերից յուրաքանչյուրը կաջակցի մյուս կողմի կազմակերպած մշակութային հարցերին նվիրված միջազգային գիտաժողովներին, մրցույթներին և հանդիպումներին իրենց ներկայացուցիչների մասնակցությանը:

Հոդված 6.

Կողմերը կխրախուսեն երկու պետությունների արվեստագետների փոխայցելությունները և հանդիպումները, ինչպես նաև մասնագետների և փորձի փոխանակումները կրթության ոլորտում:

Հոդված 7.

Կողմերը սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, իրենց իրավասու պետական մարմինների հավասար թվով լիազոր ներկայացուցիչներից՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, կստեղծեն Համատեղ Հանձնաժողով, որի նիստերն առնվազն երեք տարին մեկ անգամ պարբերաբար և հաջորդաբար կգումարվեն Երևանում և Սեուլում:

Համատեղ Հանձնաժողովը կգործի իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

Կողմերը իրենց ներկայացուցիչների մասին փոխադարձաբար դիվանագիտական ուղիներով միմյանց կտեղեկացնեն սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

Հոդված 8.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխություններն ու լրացումները կձևակերպվեն առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կհանդիսանան վերջինիս անբաժանելի մասը:

Հոդված 9.

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի պետությունների ներքին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցելու օրվանից և գործում է անորոշ ժամանակով:

Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի՝ այդպիսի մտադրության մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ծանուցելու օրվանից վեց ամիս հետո:

Կատարված է ք. ---------- ---------- թ. երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, կորեերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր բնագրերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում որևէ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ